ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 113.9%, 2021թ. հունվար-օգոստոսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.8%, իսկ 2020թ. հունվար-օգոստոսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 93.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 1 տրիլիոն 645 մլրդ 186 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 229.5 և 402.5 մլրդ դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 243 մլրդ 94.7 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 37.8 և 64.1 մլրդ դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 2 տրլ 606 մլրդ 266.1 մլն. դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 531.7 և 832.3 մլրդ դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 1 տրլ 587 մլրդ 7.7 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 395 և 472.7 մլրդ դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 109.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.0%-ի և 100.9%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 114.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.3%-ի և 80.9%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 113.6%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.1%-ի և 88.5%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 127.1%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.3%-ի և 89.2%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 363 մլրդ 775.1 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 29.3 մլրդ, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 112.8 մրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 1 տրիլիոն 44 մլրդ 370,3 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 217,6 և 235,8 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 219 մլրդ 90,8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 38.4 և 50.1 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-օգոստոսին կազմել է 17 մլրդ 949.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2 մլրդ 756,4 մլն և 3 մլրդ 818,6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 92.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.3%-ի և 117.3%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 118.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.8%-ի և 96.8%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 102.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.6%-ի և 101.1%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 107.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.2%-ի և 82.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 167 մլրդ 401.9 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 6.7 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 77.8 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 272 մլրդ 330.3 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 67.1 և 86 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 480 մլրդ 796.8 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 169 և 174.2 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 107.4%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 65.2%-ի և 94.5%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 132.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.9%-ի և 107.1%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 143.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.5%-ի և 108.7%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-օգոստոսին 2021թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 108.4%, 2021թ. հունվար-օգոստոսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.4%, 2020թ. հունվար-օգոստոսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.8%: ՍԳԻ-ն 2022թ. օգոստոսին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 105.0%, 2021թ. օգոստոսին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 103.7%, 2020թ. օգոստոսին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 98.8%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 133 մլրդ 443 մլն դրամ, ինչը 72 մլրդ դրամով կամ 6%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 136.9 մլրդ դրամով կամ 13.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. օգոստոսի դրությամբ կազմել է 76750 մարդ, ինչը 13554 մարդով կամ 15%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 11800 մարդով կամ 13.3%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. օգոստոսի դրությամբ կազմել է 54984 մարդ, ինչը 7041 մարդով կամ 11.4%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6054 մարդով կամ 9.9%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինասավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 7 մլրդ 823.3 մլն դոլար, ինչը 2 մլրդ 814.2 մլն դոլարով կամ 56.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 382.7 մլն դոլարով կամ 76.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է -1,976.7 մլն դոլար, ինչը 791.7 մլն դոլարով կամ 66.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 676.2 մլն դոլարով կամ 52%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 2 մլրդ 923.3 մլն դոլար, ինչը 1 մլրդ 11.3 մլն դոլարով կամ 52.9%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 353,2 մլն դոլարով կամ 86,2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 4 մլրդ 900 մլն դոլար, ինչը 1 մլրդ 803 մլն դոլարով կամ 58.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 29.4 մլն դոլարով կամ 70.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-օգոստոսին կազմել է 223971 դրամ, ինչը 25603 դրամով կամ 12.9%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 36787 դրամով կամ 19.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 53 մլրդ 708.7 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 70 մլրդ 772.1 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -124 մլրդ 480.8 մլն դրամ: 2021թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 143 մլրդ 495.8 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -107 մլրդ 61.8 մլն և 250 մլրդ 557.6 մլն դրամ: 2020թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 135 մլրդ 274.3 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 100 մլրդ 681.3 մլն և 34 մլրդ 593 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ